ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0078 Երևան, Հալաբյան 41 ա, հեռ. 380-250
էլ. փոստ armen.gevorgyan@justice.am

№ 10/19.1/14961-15
«03» դեկտ 2015թ.

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱՁՈՐԻ
ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱՐԹՈՒՐ ՍԱՔՈՒՆՑԻՆ

Հարգելի պարոն Սաքունց

Ի պատասխան Ձեր 2015 թվականի նոյեմբերի 5-ի թիվ Ե-2015-05.11/594 գրության՝ հայտնում եմ, որ ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ազատազրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ կրող անձը կարող է պայմանական վաղաժամկետ ազատվել, եթե դատարանը գտնի, որ նա ուղղվելու համար նշանակված պատժի մնացած մասը կրելու կարիք չունի:

ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի «Դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ներկայացման հարցերը պատիժը կատարող հիմնարկի կողմից քննարկման կարգը հաստատելու մասին» N 1304-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) հաստատված կարգի 6-րդ կետը սահմանում է, որ դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցը վարչական հանձնաժողովին ներկայացնում է հանձնաժողովի նախագահի տեղակալը՝ հիմք ընդունելով դատապարտյալի անձնական գործը, որում պետք է ներառված լինի նաև դատապարտյալի վերաբերյալ բնութագիրը: Նույն կարգի 10-րդ կետի համաձայն՝ վարչական հանձնաժողովը, ի թիվս այլ որոշումների, ընդունում է

դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու մասին միջնորդագիր ներկայացնելու վերաբերյալ որոշում: Վարչական հանձնաժողովի որոշումը պարունակում է տեղեկություններ դատապարտյալին մեղսագրված արարքի, պատժաչափի, քրեակատարողական հիմնարկ նրա տեղափոխման ամսաթվի, անձը բնութագրող այլ հանգամանքների մասին: Ի շարս նշված տվյալների՝ որոշման մեջ արձանագրվում է նաև անձի ռիսկայնությունը և ուղղված լինելու հանգամանքը (Կարգի 3և N 1):

ՀՀ արդարադատության նախարարի 2008 թվականի մայիսի 30-ի թիվ 44-Ն հրամանով (այսուհետ՝ Հրաման) հաստատված «Կալանավորվածների և դատապարտյալների հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության» կարգի 68-րդ կետն ամրագրում է, որ կալանավորված անձինք և դատապարտյալները հաշվառման են վերցվում որպես ռիսկային, եթե նրանց մոտ առկա են փախուստի, ինքնավնասման, ալկոհոլի, թմրամիջոցների, ագրեսիվության և կոնֆլիկտայնության, ինչպես նաև հանցածին դիրքորոշումների հակումներից մեկը: Նույն կարգի 72-րդ կետի համաձայն՝ ալկոհոլի, թմրամիջոցների օգտագործման հակված կալանավորված անձինք և դատապարտյալները հաշվառումից կարող են հանվել համապատասխան բուժում ստանալուց հետո 1 տարվա ընթացքում, ոգելից խմիչք պատրաստելու, օգտագործելու համար կարգապահական պատասխանատվության չենթարկվելու դեպքում:

Հիշյալ իրավանորմերի համալիր վերլուծությունից հետևում է, որ մեթադոնային փոխարինող բուժում ստացող դատապարտյալները հաշվառման են վերցվում որպես ռիսկային, իսկ բնութագրում ռիսկայնության հատկանիշի առկայությունը դատապարտյալների համար պատժից պայմանական վաղաժամկետ ազատման հարցի լուծման ժամանակ կարող է նշանակություն ունենալ, քանի որ վարչական հանձնաժողովը, հաշվի առնելով ռիսկայնության առկայությունը, կայացնում է Որոշման 10-րդ կետում սահմանված որոշումներից մեկը, մասնավորապես՝ դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու մասին միջնորդագիր չներկայացնելու վերաբերյալ:

Այս պայմաններում անհրաժեշտ է նշել, որ չնայած այն հանգամանքին, որ մեթադոնը բուժման ընթացքում կիրառվում է որպես դեղամիջոց, սակայն անձի ամբողջական առողջացման փուլը կարող է լինել բավականին տևական ժամանակ, իսկ առողջության ազդեցությունը վարքագծի նկատմամբ կարող է պահպանվել անգամ բուժման կուրսն ավարտելուց հետո: Նման պայմաններում, կարծում եմ, որ նպատակահարմար չէ այդպիսի անձին բուժման սկզբում կամ դրա վաղ շրջանում որպես ռիսկային չհաշվառելը:

Բացի այդ, հարկ է նշել, որ դատապարտյալին ռիսկային խմբում հաշվառելը համընկնում է մեթադոնային փոխարինող բուժման ընթացքին: Ավելին, դատապարտյալների նկատմամբ սահմանելով մեթադոնային բուժում, նրանց նկատմամբ արդեն իսկ ցուցաբերվում է տարբերակված մոտեցում և բուժումը ստանալուց հետո 1 տարվա ընթացքում այդպիսի դատապարտյալները կարող են հանվել հաշվառումից և արդյունքում՝ համարվել ոչ ռիսկային:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ Ձեր կողմից ներկայացված առաջարկի հիման վրա Հրամանով հաստատված կարգում ներկայումս լրացում կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Կատարող՝ Արփինե Սարգսյան
Օրենսդրության զարգացման և իրավական վերլուծությունների վարչություն
Հեռ. 380-386